

Միվրի կամ Ինսիգ առանի (այսինքն՝ ցից անմարդաբնակ) կը կոչուի եւ որ համակ ժայռ մ'է ահադին եւ սրագաղաթ, որուն վրայ կարելի չէ եկեղեցի շինել: Ահա այս կղզիէն բաւական հեռու՝ բայց անոր դրացին է Նասը առանի ըստածը որ տափաստարակ կղզի մ'է եւ վրան ունի աւերակ մը, ինչպէս յայտնեցի վերեւ:

Ներսէսի աքսորակղզին այս կրնայ եղած ըլլալ, մանուկն ուր՝ Պատմութիւնը կ'ըսէ, թէ նա աւելի հեռուները պիտի աքսորուէր, բայց փոթորիկ մը արդեւը եղաւ եւ սանոյ նաւը հող հանեց զինքը:

\* \* \*

Սպասելով որ աւելի լուսատու աղբիւրներ կարենանք ունենալ մէկ օր այս մասին, դիտենք Երեմիայի միւս տողերը (207—209), որոնք կը խօսին Փիլիպպոս կաթողիկոսի վրայ:

Փիլիպպոս կաթողիկոս, որու մասին Ծանօթագրութիւններու Ա. հատորին մէջ դիտեղած եմ արդէն քանի մը տեղեկութիւններ, Ազգակեցի էր, եւ էջմիածնի կաթողիկոս ընտրուած է 1631ին, յաջորդելով Մովսէս կաթողիկոսին, որուն սիրելի էր եւ անկէ ալ ձեռնադրուած էր<sup>178</sup> Եպիսկոպոս:

Մեր Եկեղեցական Պատմութեան մէջ լաւ անուն եւ մեծ յիշատակ թողած կաթողիկոսներէն է: Սա 1637ին կ'երթայ Աստղան եւ կը յաջորդի Ս. Լուսաւորչի աջը էջմիածին բերելու<sup>179</sup>: 1640ին Դպրոց կը բանայ էջմիածնի մէջ եւ 1651 թուին Առաքել Դաւրիթեցիի գրել կու տայ Հանրածանօթ պատմութիւնը<sup>180</sup>:

1651 Յուլիան կաթողիկոսը ճամբայ կ'ելլէ դէպի Կ. Պոլիս, բայց նախ կ'երթայ Կարին եւ անտի Երուսաղէմ<sup>181</sup>, ուր Սոյ Ներսէս կաթողիկոսին հետ եկեղեցական կարգ մը իրաւասութիւններու մասին համաձայնութիւն կը գոյացնէ:

1652ին Երուսաղէմէն կ'երթայ Կ. Պոլիս ցամաքի ճամբով<sup>182</sup> կը ժամանէ հոն Յունիս 20ին եւ գրեթէ ամբողջ տարի մը կը մնայ, Պատրիարք կը կարգէ Յովհաննէս Մուղ-

նեցին եւ կը վճարէ պատրիարքարանին մեծագումար պարտքերը:

1653 Ապրիլ 26ին կը թողու Կ. Պոլիսը եւ նաւով կ'երթայ Պուրսա քաղաքը, ուղեկից ունենալով իրեն Երեմիա Չէլչպլին եւ ուրիշ աղագայիններ, որոնք կէս ճամբան կ'այցելէն «կղզին Ներսէսի», ինչպէս վերեւ պատմուած է, եւ հոն երկու օր մնալով կը ճաշակեն համեղ Թրաճուկը (տող 211):

\* \* \*

Պուրսայի<sup>183</sup> մէջ մեծ ընդունելութիւն կը գտնայ Փիլիպպոս կաթողիկոս, հիւր կ'ըլլայ մեծահարուստ Անտոն Չէլչպլի հայուն<sup>184</sup>,

<sup>178</sup> Պուրսա քաղաքը Բիւթանիոյ, վաղ ժամանակներէ սկսած ունէր Հայ դաղութ մը բաւական նշանակութիւն: Ֆաթիհ երբ Կ. Պոլիսը առաւ Պուրսայէն Յովսէփ Եպիսկոպոսը բերել տուաւ եւ զանիկա Պատրիարք հռչակեց:

<sup>179</sup> Պուրսա նշանաւոր եկեղեցականներ ունեցած է. Գէորգ Գ. կաթողիկոսը հոն առաջնորդ եղած է, եւ հետզհետէ եղած են հոն ուրիշ առաջնորդներ որոնց մանրամասն ցանկը հրատարակուած է տարիներ առաջ Պուրսական թերթերու մէջ:

<sup>180</sup> Պուրսայի մէջ 1888ին առաջին անգամ ըլլալով հաստատուած է շերամարուծական վարժարան, որուն Տնօրէն եղած է Եղապարտ Գէորգ Թորոզմեան եւ շերամի հունտերու սրանչելի տեսակները հասցուցած է:

<sup>181</sup> Այս Անտոն Չէլչպլի մասին Երեմիա Չէլչպլի շատ լաւ չի խօսիր, հակառակ որ վերջերս (տե՛ս «Այլագայ», Բարիս, 19 Յունիս 1934) բարեկամս, բանասէր Տիար Հ. Պէրպէրեան, զայն կը ներկայացունէր իրրեւ մեծատաղանդ եւ բարեգործ անձ մը:

Իրաւ է թէ նա օտարներու քով մեծ յարգ ու պատիւ ունեցած անձ մը եղած է, ինչպէս Հ. Պէրպէրեան ցոյց կու տայ վաւերական աղբիւրներու շնորհիւ, բայց վերջ ի վերջոյ անոր Լիվոնոս փախչելը, կասկած կու տայ թէ ունեցած փարթամ վիճակը յանրապի վատուած բան մ'էր:

Երուսաղէմի վանքը գտնուած Երեմիա Չէլչպլի Օրագրութեան մէջ արձանագրուած են անոր մասին հետեւեալ տղերը զորս յղած է ինձ 1934 Յունիս 20ին Գեր. Մեհրոպ Սրբազան Նշանեան:

«Փիլիպպոս կաթողիկոսին Պոլիս գտնուած միջոցին՝ եւ հոնկէ դեռ չի մեկնած, կը գրէ՝ Երեմիա թէ. «Եւ օրս Անտոն Չէլչպլուն հայրս մեռաւ եւ գնացաւ կաթողիկոսիւն եւ վարդապետս ի վերայ նորա, եւ բազում ֆահանայք եկեալ յեկեղեցեացն, եւ զգեստաւորեցան զպիթ գշապիկս եւ սարկաւազունքս եւ սաղաւարտիս եւ ուրարաւ եւ բուրվառով եւ աւետարանաւ... կաթողիկոսն... խաչիս եւ գաւազանաւ, լուցեալ մուկիւնով եւ այսպիսի գարդաւքս եւ ուխտիս միջնիս ի դիրս գերեզմանաց Դաւաթոյ այնպէս գնացաւ: (Այս տողէն իմանալու չենք թէ Անտոն Չէլչպլի Հայրը Դաւաթիոյ եկեղեցին թողուած է, ո՛չ. այլ Բանկալիի Ազգ. Գերեզմանատունը, որ Դաւաթացի բնակաց, պանդխտից է կ'ըսէ Երեմիա Չէլչպլի (Հատոր Ա., էջ 79, տող 286): Այսօր տեսաք գիտաս վայելչութեան եկեղեցւոյ, զոր լինէր ի ժամանակս քաղաքաց, եւ յետ... քաղմանն եկեալ եկաք ի տուն Չէլչպլուն, հացկերոյք արարեալ հոգոյն, եւ անտի եկեալ գնացաք»:

Սոյն տղերը ապացոյց են թէ ո՛ր աստիճանի ընտել ու թողաւորական կեանք վարող անձ մ'էր Անտոն Չէլչպլին, որ կաթողիկոսին խնդրանքին վրայ՝ ըստ Առաքել Դաւրիթեցիի (էջ 332—333), յանձն կ'առնէ էջմիածնի գանդատունը ամբողջապէս շինել, բայց ըստ Օրագրութեան Երեմիա Չէլչպլի 2000 զըշ. միայն կու տայ այդ նպատակին համար:

<sup>178</sup> Պատմ. Առաքել Դաւրիթեցոյ, Ամսօրերում, էջ 309:  
<sup>179</sup> Անդ, էջ 608:  
<sup>180</sup> Անդ, էջ 624:  
<sup>181</sup> Չամչեան Պատմ. Հայոց, Հատոր Գ., էջ 628:  
<sup>182</sup> Առաքել Դաւրիթեցի, էջ 332:

որու մասին խօսած եմ Ծանօթագրութիւններու Բ. հատորին մէջ (էջ 574 եւ 575):

Կաթողիկոսը Պուրսայէն կը մեկնի, միշտ ցամաքի ճամբով, եւ դէպի 1654ի վերջերը կը հասնի էջմիածին եւ հոն դարձեալ շինարար գործերու հեղինակ ըլլալէ յետոյ, կը վախճանի 1655ին<sup>185</sup> եւ կը թաղուի Ս. Հռիփսիմեանց Եկեղեցւոյն մէջ, ուր կ'ունենայ իւր շիրիմը հետեւեալ Արձանագրութեամբ, զոր կը կարդանք Հ. Ղ. Ալիշանի «Այրարատ» հոյակապ Երկասիրութեան 240 էջին մէջ, սապէս.

«Հագար հարիւր չորս քուին, մարտի քամի եւ հնգին վախճանեցաւ Հաղիակեցի Փիլիպպոս սֆանչելագործ կաթողիկոսն ամենայն Հայոց, եւ եղաւ սուրբ նշարք մորա յայսմ շիրմի, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի»:

(Շարունակելի:) ԴԿՏ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՍԵԱՆ



**ԱՅՍԵՐԻԿ ԼԵՂՈՒԻ ԵՆՅԵՏՏ ԳՐՈՇԵԿԿԻՐԸ (ՅՐԵՆՉԵՍԿՈՍ ԶԵՔԵՐԻՆ ԾԵՐՏԻՐՈՍԵԱՆ)**

Ռուսահայ նորագոյն աշխարհիկ լեզուի եւ գրականութեան հիմնադիրը համարուած է հաւաքաբար Արուսեանը: 1841 թուականին է, որ նա գրեց իր «Վերք Հայաստանին», որով հայ գրականութեան մէջ բացեց մի նոր շրջան եւ սկիզբ դրեց աշխարհիկ նորագոյն վերակազմութեան: Այսպէս է արձանագրուած եւ ընդգծուած հայ գրականութեան պատմութեան մէջ: Այդ է եւ մեր բանասէր-ընդհանրապետները, գրականութեան պատմագիրները եկեղեցականութեան սեփականութիւնն էր: Այդպէս էր գրականութեան պատկերը, որովհետեւ բացառապէս կենդանացած էր հայ կրօնաւորները ձեռքում եւ նուիրուած միայն կրօնական խնդիրները: Ահա թէ ի՞նչու պատմաշրջանի գրականութեան մէջ չենք տեսնում ժողովրդի լեզուն եւ կեանքը, այլ կրօնաբարոյական նիւթեր: Հէնց գրանով էլ պիտի բացատրել այն հանգամանքը, որ աշխարհարար գրողները ո՛չ միայն յարգանք եւ հեղինակութիւն չէին վայելում, այլ եւ ենթակայ էին հալածանքներ:

Այսօր, սակայն, առանձնապէս կարեւորութիւն ունի Հայոց գրականութեան պատմութեան համար այն էական հարցը, թէ ար-

Կարեւոր եւ նկատելի դիրք ունեցող Հայ մը եղած է Անտոն Չէլչպլին, չեմ ուրանար, բայց անոր Եղապարտագրութեան էր՝ Հասան աղա եղած, ինչպէս կը գրէ Երեմիա Չէլչպլի (Հատոր Բ., էջ 547, 574, 575) եւ անոր շնորհիւր գիշար էր իւր յորդաւոր հարստութիւնը առանց իւր Ազգին օգուտ մը ընծայելու, որով իրաւամբ «Նամիր» անվանը գրուած է անոր անունին քով:  
<sup>185</sup> Առաքել Դաւրիթեցի, էջ 339, 425 եւ Չամչեան Պատմ. Հայոց, Հատոր Գ., էջ 656:

դեօք Արուսեանի «Վերք Հայաստանին» պատմական վէպից առաջ չեն եղել աշխարհարար լեզուով յորինուած գրքեր: Արդեօք Արուսեանից առաջ գրականութեան բնագաւառում հրատարակ չեն եկել հեղինակներ եւ իրենց ձեռքում բարձր պահել աշխարհարարի դրօշը:

Մեր որոնումներն ու պրպտումները դրական պատասխան են տալիս: Այսօր մեր ձեռքի տակ ունենք մի նոր աղբիւր, որն ընդգծում է այն կարեւոր հանգամանքը, թէ, այո՛, Արուսեանից առաջ հրատարակ է եկել աշխարհիկ լեզուի մի դրօշակակիր, որը խորապէս գիտակցել է այն էական բողոքն, թէ անհրաժեշտ է գրել աշխարհաբար լեզուով, անհրաժեշտ է ժողովրդին տալ իրեն հասկանալի, խօսած լեզուով գրքեր: Այդ հասկացողութեամբ էլ նա ստեղծագործել է աշխարհիկ լեզուով, որպէս զի ժողովուրդը կարգացածը կարողանայ հեշտութեամբ հասկանալ եւ սիրով կարգաւ մայրենի լեզուով գրուած գրքերը:

Այդ դրօշակիրը Զաքարիա Մարտիրոսեան է, որ գրական հրատարակ է գալիս մեզանից 182 տարի առաջ եւ հայ գրականութեան նուիրում աշխարհիկ լեզուով մի գիրք, որի ճակատին կարդում ենք. «Ճշմարիտ իմաստութիւն»: Հրատարակ է գալիս նա ժ. դարի առաջին շրջանում, 1755 թուականին: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ հայ գրականութեան մէջ զրարարն էր տիրապետում, երբ գրականութիւնը հեռու էր ժողովրդից. նա հասարակութեան որոշ խաւի մի փոքրաթիւ դասակարգի, գլխաւորապէս եկեղեցականութեան սեփականութիւնն էր: Այդպէս էր գրականութեան պատկերը, որովհետեւ բացառապէս կենդանացած էր հայ կրօնաւորները ձեռքում եւ նուիրուած միայն կրօնական խնդիրները: Ահա թէ ի՞նչու պատմաշրջանի գրականութեան մէջ չենք տեսնում ժողովրդի լեզուն եւ կեանքը, այլ կրօնաբարոյական նիւթեր: Հէնց գրանով էլ պիտի բացատրել այն հանգամանքը, որ աշխարհարար գրողները ո՛չ միայն յարգանք եւ հեղինակութիւն չէին վայելում, այլ եւ ենթակայ էին հալածանքներ:

Ահա մի այդպիսի մուսայլ ժամանակաշրջանում հրատարակ է գալիս Զաքարիա զի

Մարտիրոսը եւ աշխարհիկ լեզուով գրում «ձշմարիտ իմաստութիւն» խորագրով գիրքը:

Թէ ինչո՞ւ նա ժայռանում է դրարարի գերիշխանութեան դէմ եւ իր գիրքը գրում աշխարհիկ լեզուով, այդ մասին նա իր «Թուխտ առ բարեպաշտ ընթերցողս» խորագրով շարադրած յառաջաբանում տալիս է որոշ լուսարանութիւններ եւ պարզում իր տեսակէտը թէ՛ դրարար եւ թէ՛ աշխարհաբար լեզուի առանձնայատկութիւնների մասին:

Նա ամենից առաջ ընդգծում է այն հանգամանքը, որ եթէ իր գիրքը դրարար գրէր, անկասկած, նիւթապէս աւելի կ'օգտուէր եւ կարգացողների համար էլ աւելի քայցր եւ «պատուական» կը լինէր, բայց վերլուծելով ժամանակաշրջանի հասարակական կեանքի երեւոյթները, համոզում է, որ աշխարհաբար գրուածներն աւելի շահաւէտ են, որովհետեւ բոլորի համար էլ հասկանալի են: Այդ հասկացողութեամբ էլ նա իր գիրքն աշխարհաբար լեզուով է գրում, որպէս զի «միայն գիտուն խայէրք» չկարգան, այլ նրա քաղցրութիւնն առնեն ժողովրդական լայն խաւերը: Նա ընդգծում է, որ ամէն մի հեղինակ նկատի պիտի ունենայ ո՛չ թէ գրաբար եւ քերականութիւն իմացողներին, այլ «կարդացողաց գիտացողութիւնը»: Ահա թէ Չաքարեան իր գրքի յառաջաբանում ի՛նչպէս է բնորոշում իր տեսակէտն աշխարհաբար լեզուի մասին.

«... Գիտացողութիւն կարդացողաց. էստար պատուութիւնն էն այ՛ որ մին մարդ որ ուզում այ մին գիրք մեռ առու կարդայ՝ պիտի այ որ էն գրքին գրած լեզուն կատարեայլապէս գտել լինի եւ հիմանայ»:

Չաքարեան Մարտիրոսն էլ աւելի խորացնելով իր տեսակէտները, իր յառաջաբանում տալիս է նոր լուսարանութիւններ, թէ ինչո՞ւ դրարար լեզուով չպիտի գրել: Նա ուսումնասիրելով կեանքի հանգամանքները եւ ժամանակի հրամայողական պահանջները, գալիս է այն եզրակացութեան, որ իւրաքանչիւր հեղինակ, ստեղծագործող պէտք է գրէ ոչ թէ «գիտուն եւ կարդացող մարդկանց», այլ «հասարակապէս ամենամեծ» համար: Գտնում է, որ բազմաթիւ Հայեր գրաբար լեզուն չգիտնալու պատճառով՝ կտրուած են գրականութիւնից, գիրք չեն կարդում, որով չեն կարողանում օգտուել լայն տեսած գրքերից: Չեն կարդում, որովհետեւ չեն հասկանում կարգացածների իմաստը: Հէնց այդ պատճառով

էլ նրանք չեն լուսաւորում, չեն զարգանում եւ խարխախում են խաւարի ու ագիտութեան մէջ: Դա հասարակական տեսակէտից մի չաբէք է, որից ամենից շատ տուժում են «խելաչերը»: Ուրեմն պիտի յօրինել այնպիսի գրքեր, որոնք մատչելի լինին ամենքին եւ առհասարակ զբոսն ընթերցողներին ընթերցանութեան: Չաքարեան այսպէս շեշտակի է դնում հարցը՝ գրական լեզուի ինչպիսի շօշափելիս: Նա նկատի է առնում հասարակութեան ո՛չ թէ վերին խաւը, այլ բուն ժողովուրդը: Այդ հանգամանքն էլ բնորոշում է նրա գէժօկրատիկ ոգին: Ահա թէ նա ինչպէս է ընդգծում հեղինակի, ստեղծագործողի հասարակական դերը եւ միաժամանակ շեշտում, թէ ինչո՞ւ աշխարհաբար լեզուով պիտի գրել:

«... Թէ մին գիրք որ մին մարդ գրում այ միայն գիտուն եւ կարդացող մարդկանց խմար չէ գրում. այլ հասարակապէս ամենամեծ խմար. որ ամենեքին ուր աշխատանքէն շախվեն եւ չուն որ ես տեսել ամ եւ տեսման ամ որ շատ եւ շատ խայէր կան որ գրաբար լեզուն լէվ հիմաման չեն. եւ չուն հիմաման չեն՝ նմանապէս էլ շախվան չեն գրէրանցէ. եւ չուն որ մոնչ հիմաման ան եւ մոնչ շախվան ան եւ մոնչ բողբոսութիւն ան քվման խելիչէրանց սրտէրանէն վէլ չէ գովման որ տարէն՝ կամ բոլոր շատ տարէն մին գիրք մեռ առուն որ կարդան. եւ էս պատհասիցն այ ծնման էն ծոյլութիւնն՝ որ մեր հայից միջումն կայ գիրք չը կարդալն եւ էս ծոյլութեանն ծնման այ էն մեծ եւ լացական տգէտութիւնն որ մեր հայից միջումն կայ»:

Չաքարեան իր տեսակէտներն ընթերցողներին էլ աւելի պարզ եւ հասկանալի դարձնելու նպատակով՝ տարբեր վարկանաներով կրկնում է եւ ընդգծում իր մտքերը: Նա իր շեշտը գլխաւորապէս դնում է այն հանգամանքի վրայ, որ գրականութեան լեզուն բուն ժողովրդին հասկանալի եւ մատչելի պիտի լինի: Դրա համար էլ ժողովրդի լեզուով պիտի գրել, որպէս զի բոլորն էլ կարգան, հասկանան եւ օգտուեն: Ահա թէ նա ի՛նչ խորհուրդ է տալիս իր սիրելի ընթերցողներին.

«... Բայց միայն իմ խորհուրդս էն էր որ ամենեքեան կարդան հիմանան եւ շախվեն. թէ գիտուն կամ հիմարք. թէ կարդացող կամ աշխարհական, թէ իմաստուն կամ

կամ թէ տգէտք, եւ այլ ամենայնքն, եւ ամենանոց խմար ամ աշխատէլ»:

Այսպէս է եզրակացնում աշխարհիկ լեզուի ջերմ պաշտպան Չաքարեան: Նա արձանագրում է, որ լեզուն իր էութեամբ ժողովրդական բնոյթ պիտի ունենայ, ամենքի համար էլ պիտի հասկանալի լինի, որպէս զի բոլորն էլ օգտուեն: Սակայն այդպէ՞ս է գրաբարը, ունի՞ դասական այդ լեզուն ժողովրդական լեզուի առանձնայատկութիւնները: — Երբե՛ք: Դա մի լեզու է, որ հասկանալի չէ բուն ժողովրդի համար: Այդ լեզուն ծառայում է հասարակութեան մի շատ փոքրիկ, շատ աննշան մասին՝ կրօնաւորներին եւ նրանց զաղափարախօսներին: Ուրեմն պիտի գրել ժողովրդի համար, արհամարհելով «գիտուն, խելօք» մարդկանց պախարակութիւնները: Անհրաժեշտ է կերտել ժողովրդական, ամենին հասկանալի լեզու — այս է Չաքարեանի եզրակացութիւնը: Այդ լեզուով էլ նա գրում է «ձշմարիտ իմաստութիւն» գիրքը:

\*

Այժմ լուսարաններ այն էական հարցը, թէ Չաքարեան ժողովրդական ո՞ր բարբառին առաջնութիւն է տալիս, ո՞ր դաւաճարարաբար նա հիմք է ընդունում աշխարհիկ լեզուի զարգացման համար:

Գրական լեզուի զարգացման համար Չաքարեան նախընտրում է արեւելեան ամենագլխաւոր բարբառներից մէկը: Դա Նոր-Ջուղայի ժողովրդի հարազատ բարբառն է, որն ունի իր հիմնական յատկանիշները, իր արտայայտութեան ուրոյն ձեւերն ու սօք: Այդ բարբառով մինչեւ այսօր էլ դեռ խօսում են գլխաւորապէս Նոր-Ջուղայում եւ առհասարակ Իրանի, Հնդկաստանի, Բրմաստանի եւ Ջաւա կղզու քաղաքներում, ինչպէս՝ Շիրազ, Բուշեռ, Բոմբէյ, Կալկաթա, Մամբայ, Սինկափուր, Բաղաւիա, Մադրաս, Սուրբայի, Ռանգուն, Դադգա, ուր ապրում են Նոր-Ջուղայի Հայերը: Այդ լեզուն ունի իր ուրոյն քերականութիւնը եւ բարբառագիտութեան տեսակէտից ներկայացնում է ինքնուրոյն մի պատկեր:

\*

Ապա ի՛նչ է «ձշմարիտ իմաստութեան» բովանդակութիւնը, ի՛նչ խնդիրներ է շօշափում եւ ի՛նչպիսի մտքեր արծարծում:

Գիրքը ո՛չ թէ ինքնուրոյն ստեղծագործութիւն է, այլ սպաներէնից թարգմանութիւն եւ ունի կրօնաբարոյական բովանդակութիւն. թէ ի՞նչու աշխարհիկ լեզուի դրօշակակիր Չաքարեան ժողովրդի կեանքից վերցրած գիրք չի թարգմանել, ի՞նչու չի գրել կենցաղային բովանդակութեամբ, բուն ժողովրդի կեանքը պատկերող, նրա մտածութիւնների, դաւերի եւ ուրախութիւնների թարգման հանդիսացող մի ստեղծագործութիւն, այլ թարգմանել է կրօնական մի երկ: Այդ երեւոյթի մասին Մարտիրոսը տալիս է պարզ եւ որոշ բացատրութիւն: Նա գտնում է, որ ինք հոգեւորական է եւ իր կոչումն է դրել աստուածային նիւթերի մասին: Ահա նրա բացատրութիւնը.

«... Ես կրօնաւոր ամ եւ անպատկան ամ եւ հարգից առաջի Աստուծոյ եւ առաջի իմաստուն եւ հոգեվոր մարդկոց բարի չէր արեւման որ մին վանական ցատէր ժամանակ խառչէր կովի գիրք կամ աշխարացուց կամ աստիաչափութիւն կամ ըւէնց իմմիւնսի գրէր. գերայ՛ ով որ աշխարականաց աշխարում այ եւ աշխարինն այ աշխարի ա խօսման. աշխարի այ եւ միշտ էն այ խորհրդում եւ էն այ կարօտելով ցանկաման. եւ ով որ Աստուծոյ այ Աստուծոյ ծառայութեան տանն այ, պարտ այ թլաշ առի Աստուածանէ խօսի եւ նորայ սուրբ պատվիրանքն պախելն ուսուցանի եւ քարոզի»:

Այստեղ ընդգծենք եւ այն, որ Չաքարեան միայն «ձշմարիտ իմաստութիւն» գրքի թարգմանութեամբ չի սահմանափակել իր գրական գործունէութիւնը: Նա աշխարհաբար լեզուով գրել է նաեւ ուրիշ երեք գրքեր: Թէ ի՛նչ բովանդակութիւն ունին այդ գրքերը, հասարակական տեսակէտից ի՛նչ արժէք են ներկայացնում, մեզ պարզ չէ: Յայտնի է միայն այն, որ այդ երեք գրքերն էլ յօրինուած են աշխարհաբար լեզուով: Այդ մասին գրում է Հէնց ինքը՝ Չաքարեան: Ահա նրա վկայութիւնը.

«... Սիրելի ընթերցող, էս գիրքն որ այժմ էս ամ ընծայում փոքրիկ ինձ աշխատանք եւ քրտունք ցատաւ, համայ չուն որ սիրով ամ գրել ոխ ինձ թէքէվ արեվաց. ոչ թէ միայն էս առաջին գիրք, այլ միուս երեք էլ որ ունեմ աշխատած՝ որ յետոյ ընծայելից ամ քեզ»:

գերայ ով որ սէր ունի մոնչիչ իմին ուր աչկուսն դժար չէ արեւման. գերայ սէրն ամենայնի հախթոյ այ»:

\*

Պարզենք մի կարեւոր կէտ եւս. Չաքարիա ինչպիսի հանգամանքներունն է թարգմանել «Ճշմարիտ իմաստութիւն» գիրքը:

Յառաջաբանում նա ընդգծում է, որ զբքի թարգմանութիւնը կատարել է մենմենակ, առանց ուրիշի օգնութեան: Բայց այդ էլ դեռ ոչինչ: Նա թարգմանութիւնն ինքն է «պարզագրել», ինքն է «յերես վեռ առել» եւ ապա օրինակել: Ահա նման ծանր պայմաններում թարգմանել է նա ամբողջ գիրքը, այն էլ օգտագործելով իր ազատ ժամերը: Իր կատարած աշխատանքը նա նկարագրում է այսպէս.

«... Չուն որ էս փոքրիկ աշխատանքում մինէկ ի առանց ընկեր եւ օգնութեան՝ վասն էս պատճառին ինձ փոքրիկ դժվարին քվաց ... գերայ մինէկ ես ի քարգմանողն, ես ի պարգայգրողն, եւ ես ի յերես վեռ առողն եւ օրինակողն. եւ ի վերայ ամենայնի՝ իմ անայապատումն բանն եւ գործքն պակաս չէր»:

Արդեօք տպագրութեամբ է նման ծանր պայմաններում յօրինուած գիրքը: Իր գրած յառաջաբանում Չաքարիա շատ է խնդրում նրկթապէս կարող սիրելի ընթերցողներին, որ գրքից մի օրինակ ուղարկեն Վենետիկ Միթարեան հայրերին կամ մի այլ քաղաք եւ տպագրել տան: Ահա նրա դիմումը.

«... Դարցեայլ խնդրում ամ ՚ի սէրն Գրիստոսի՝ տեսուն մերոյ. որ եթէ դու կարող աս եւ ունեցող աս ի յետ էս գիրք կարդալէն քէ շատէն փոքրէն քէ հաջոյ քվայ՝ աղաչում ամ վասն Աստուծոյ սէրն որ քլաշ առես մին օրինակ վեռ առուս աղարկես Վենետիկ կամ այլ տեղ որ մեր լիզվովն ստամփայ տան. եւ էս վաստակութեանն քէ դժար եւ շատ չքքվա. գերայ հոգեվոր գործք ողորմութեան այ...»:

Որ եւ է մեկենաս արդեօք յանձն առնում է գրքի տպագրութիւնը. հեղինակը տեսնում էր գրքի հրատարակութիւնը, այդ մեղ յայտնի չէ: Միայն 1848 թուականին Նոր-Չուղայեցի պարոն Սարգիս Մանուկեանը Ռանդունից ձեռագիր մատենան ուղարկում է Կալիֆթա բանաստեղծ-իմբագիր Մեարովը թարգմանանին: «Ազգասէր Արարատեան» հանդիսում (1848 թիւ 11) նա տպագրում է գրքի յառաջաբանը եւ միաժամանակ կոչ անում ժամանակի գրասէրներին՝ տպագրել աշխարհիկ լեզուով գիրքը: Ահա թարգմանի ջերմ սողերը.

«Երանի՜ որոց կարող էն՝ կամեցողք եւս լիցին կատարելոյ գարբազան փափագ սրբակրօն նգնաւորիս այսորիկ, եւ վասն ազգին վաստակաւորիս՝ ՚ի քաջալերութիւն ամենայն ջանասէր եղբարց»:

Թէ թարգմանի կոչն արձագանք գրանում է ժամանակի գրասէր հասարակութեան մէջ եւ թէ ո՞ւր է գտնուում այսօր աշխարհիկ այդ մատենանը, ո՞ր տան գրագրանում կամ գրասէրի մօտ, մեղ յայտնի չէ:

\*

Մնում է պարզել, թէ ինչ միջավայրի եւ դաստիարակութեան ծնունդ է աշխարհաբար լեզուի գրօշակակիրը:

Դժբախտաբար մանրամասն ծանօթութիւն չունենք նրա մասին: Միայն գրքի յառաջաբանում գտնում ենք մի քանի կենսագրական տուեալներ, որոնք պարզում են մեղ նրա կեանքի պատմութեան մի քանի հիմնական էջերը: Այսպէս՝ յառաջաբանում գտնուած սեղմ տողերից երեւում է, որ Չաքարիա ծնունդ է Սպահանում: Հէնց ինքը — հեղինակը յառաջաբանի վերջում ստորագրում է.

«Չաքարայ դի Մարտիրոս Ըսպահանեցի»:  
Սպահանում էլ նա ստանում է իր կրթութիւնը, ապա ձեռնադրում քահանայ, ինչպէս ինքն է վկայում. «Ես կրօնաւոր ամ եւ անապատական»: Նոյնպէս իր ստորագրութեան նա կցում է. «Փռանսիսկոս»: Սրանից երեւում է, որ նա պատկանում է կաթոլիկ միաբանութեան ուխտին: 1755 թուականին նրան տեսնում ենք Մանիլայում, Փրանկիսկեան կրօնաւորների վանքում, ուր նա նշանակվել է վանքի «մարամպետ»: Ահա նրա վկայութիւնը.

«... Չերայ մեր դասէն, ժամէն, պատարագէն, աղօթկէն, գիրք կարդալէն, եւ այլ հոգեվոր վայրէն դուս՝ որ պարտեմք ամենայն վանականի այս առաքինութիւնքն օրըստ օրէ գործելն, եւ ունի մին այլ եվելի բեռն՝ որ էր մարամպետութիւնն վանքին. վասն էս պատճառին միշտ ժամանակն տեսմանի քէ յեփ կեվելանէր որ էս աշխատանքն առի»:


\*

Ինչ հիմնական խնդիրներ է լուսաբանում Չաքարիայի այս աշխարհիկ լեզուով գրած գիրքը: Այդ կարեւոր փաստաթուղթն

ամենից առաջ ընդգծում է այն էական հանգամանքը, որ Արավանից առաջ գրական հրապարակ եւ եկել կուլտուրական դէմքեր, որոնք ըմբռնելով ժամանակի հրամայողական ոգին, ընդգծել են եւ շեշտել աշխարհիկ լեզուով գրելու անհրաժեշտութիւնը: Ո՛չ միայն այդ: Նրանք ժայռանալով տիրող ընդհանուր մտայնութեան դէմ, գրել են աշխարհաբար լեզուով գրքեր: Նրանք գիտակցել են, որ գրականութիւնը չի ծառայում ժողովրդին, որովհետեւ գրուած է նրան անհասկանալի լեզուով — գրաբարով: Գիտակցել են, որ հասարակութեան կուլտուրական մակարդակը բարձրացնելու, ժամանակի տիրող խաւարի, տգիտութեան դէմ պայքարելու համար՝ անհրաժեշտ է ժողովրդի ձեռքը տալ իրեն հասկանալի, մատչելի եւ պարզ լեզուով գրքեր: Անհրաժեշտ է գրել ժողովրդական լեզուով:

Ահա պատմաչըջանի առաջադէմ եւ լուսաւոր այդ դէմքերից մէկն է Չաքարիա դի Մարտիրոսը: Դեռ 1755 թուականին նա ժողովրդական լեզուով գրած իր գրքով հանդիսանում է մի բուն բողոք գրաբարի դերիչխանութեան դէմ: Բողոքում է նա, որ չկայ աշխարհիկ լեզուով գրականութիւն: Չկայ ժողովրդի համար, ժողովրդի լեզուով գրուած մի գիրք, որից օգտուէր բուն ժողովուրդը: Ահա այդ գիտակցութեամբ Չաքարիա գրական հրատարակ է գալիս Արավանից դեռ 86 տարի առաջ եւ ծածանում աշխարհաբար լեզուի գրօջը, որպէս զի իր գրածը բոլորը կարգան, հասկանան եւ օգտուին: Այդ տեսակէտից էլ Սպահանցի Չաքարիա դի Մարտիրոսն նորագոյն աշխարհաբար լեզուի նախապատրաստական շրջանի պատմութեան մէջ առանձնայատուկ եւ ուղարկող է գրուում: Աւելին: Նա հանդիսանում է նորագոյն աշխարհիկ լեզուի ամենաառաջին գրօշակակիրը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ



\* Ժողովուրդին հասկանալի լինելու համար աշխարհիկ լեզուով գրելու անհրաժեշտութիւնը գրացել էին Արավանից առաջ արդէն Չ. Մ. Ազգերեան (1810), Ամիրսովլար (1480), Յովհաննէս Երզնկացի (ժԳ. / ժԴ. դար) եւ նայն իսկ Միսիսար Հերացի (ժԲ. դար): Արավանի առաւելութիւնն այն եղաւ, որ նա աշխարհաբար կիրարկեց վիպասանութեան համար եւ գրական ուսովիրան հանդիսացաւ աշխարհիկ նոր գրականութեան: Խմբ. «Համդէս Ամսօրեայ»:

ՓՐԸՆՉԻՍԿՈՍ ԶԸՔԸՐԻՆ ԳԻ ՄԸՐՏԻՐՈՍ ԶՈՒՂԸՅԵՑԻ Ս. ՓՐԸՆՉԻՍԿՈՍԻ ԿԸՐԳԻՆ

Մեր աշխատակիցը Պր. Արամ Երեմեան, նախընթաց տողերու մէջ երեւան հանեց այս «աշխարհիկ լեզուի անյայտ գրօշակիր» դէմքը, ծանրանալով անոր «Ճշմարիտ իմաստութիւն» գրուածքին վրայ, յօրինուած 1755ին. ուսկից նմոյշներ տուած էր Գ. Թաղիադեանց Ա. զգա ս է ր Ա. ր ա ր ա տ ե ա ն ի մէջ, 1848, Թ. 11:

Այս գրուածքի Յառաջաբանին մէջ կը յայտարարէր հեղինակը, Ֆրանչիսկոս Չաքարիա որդի Մարտիրոսի (կամ դի Մարտիրոս), թէ «ոչ թէ միայն էս առաջին գիրք, այլ միւս երեք էլ որ ունիմ աշխատած, որ յետոյ ընծայելէց ամ զեզ»:

Թէ ինչ էին Բ. եւ Գ. գրքերու խորագիրները, ծանօթ չէ: Ես հանդիպած եմ էջմիածնի Թ. 483 ձեռագրին մէջ հեղինակին Գ. գրքին, որ Ա.—Ժէ գլուխներու բաժնուած հատոր մէ, 207 էջ բովանդակութեամբ եւ այսպիսի խորագրով.

«Գործք հոգեւոր եւ գիրք չորրորդ որ կոչի Գ ու ո ն Ա ո ա ք ի ն ու ր ք ե ա ն: Թարգմանեցեալ ի Ըսպահանից լեզուէ առ մեր հայկական աշխարհաբար լեզուն վասն ամենայնի շահաւետութեան եւ կարգացողութեան նայն Հայոց հաւատացեալոց ազգին. որ ձԿԱ հոգեվոր առականօք ծաղկազարքած այ եւ զարդարած այ: Աշխատայնութեամբն Ը ս պ ա հ ա ն ա յ Ջ ու ղ ա յ յ ց ի տ է ր Մ ա ր ա ի ր ո ս ի ո ր ղ ի Ջ ա ք ա ր ի ա յ ի ն ո ր ա յ ժ մ կ ո չ ի Ե դ ր ա յ ր Ֆ ր ա ն չ ի ս կ ո ս կ ր օ ն ա ո ր ի կ ա ր ք է ն ս ր ո ր է ա կ ա ն հ ա յ ր ա պ ե տ ս ու ր ք Ֆ ր ա ն չ ի ս կ ո ս ի ն ո ր ո մ ա ն ք կ ու ա ն վ ա ն ք ն Գ է ս կ ա լ ս ո ս ո ղ է ս ա ն Ֆ ր ա ն չ ս ի ս կ օ: Թիվն կրկնին 1755 Մանիլու մայրաքաղաքումս գրվեցաւ. ամենայնիքն ի փառս Աստուծոյ տեսուն մերոյ շինի»:

Ասոր կից կայ նաեւ գրքին սպաներէն ձևաւորը, որ հետեւեալն է.

Obras es espirit y libro quarto que intitula Puerta del cielo, en el qual se contiene la explicacion de la doctrina christiana adornada y floreada de ciento se senta y vno exemplos sobre el mis.º asumpto. Recogido de varios autores traducido y com-